

## Լաբորատոր փորձ 3 7-րդ դասարան

Թեմա՝ ՄՈՒԵԿՈՒԼ

Մաքուր նյութեր և խառնուրդներ

### Թորումը՝ որպես համասեռ խառնուրդների բաժանման եղանակ Ացետոն-ջուր խառնուրդից ացետոնի առանձնացում

Փորձի նպատակն է թորման եղանակով առանձնացնել համասեռ հեղուկ խառնուրդի բաղադրիչները՝ հիմք ընդունելով եռման ջերմաստիճանների տարբերությունը:

#### Անվտանգության կանոններ

- Փորձն իրականացնելիս հագնել խալաթ, ռետինե ձեռնոցներ և ակնոց կրել:
- Մալիքտայրոցը վառում են կրակայրիչով/լուցկիով: Չի կարելի այն վառել մեկ այլ սալիքտայրոցով, դա կարող է հրդեհի պատճառ դառնալ:
- Մալիքտայրոցի բոցը չի կարելի հանգցնել փչելով, դա վտանգավոր է, պարզապես պետք է ծածկել թասակով:
- Ացետոնը հրավտանգ է, աշխատել զգույշ, օգտագործել երկար ծայրով ծնկաձև խողովակ:

#### Անհրաժեշտ պարագաներ


- 20 մլ տարողությամբ փորձանոթ
- 15 մլ տարողությամբ փորձանոթ
- Ծնկաձև ապակե խողովակ խցանով
- 150 մլ տարողությամբ բաժակ
- Մալիքտայրոց
- Եռման կենտրոն (հախճապակե կտորներ կամ փայտիկ)
- Փորձանոթի բռնիչ (կամ կալան բռնիչով)

#### Նյութեր

- 5 մլ ացետոն
- 5 մլ ջուր
- Մառույց

### Փորձի ընթացքը

20 մլ տարողությամբ փորձանոթի մեջ լցնել 5-ական մլ ացետոն և ջուր, գցել եռման կենտրոն, փորձանոթը փակել ռետինե խցանով, որին ամրացված է ծնկաձև ապակե խողովակ: Փորձանոթն ամրացնել բռնիչին նկարում պատկերված ձևով: Այնուհետև ծնկաձև ապակե խողովակի ծայրն ընկղմել 15 մլ-անոց փորձանոթի մեջ, որը իջեցված է սառցե ջրով լցված բաժակի մեջ: 20 մլ-անոց փորձանոթը դանդաղ տաքացնել սպիրտայրոցով մինչև 15 մլ-անոց փորձանոթում 2-3 մլ հեղուկ հավաքվելը:



**Դիտարկում** (ագրեգատային վիճակի ու գույնի փոփոխություն, գազանջատում և այլն)

-----

-----

**Եզրակացություն**

-----

-----

### Հարցեր

1. Ագրեգատային վիճակի ի՞նչ փոփոխություն է տեղի ունենում փորձի ընթացքում:
2. Ինչո՞ւ են փորձանոթի մեջ ավելացվում եռման կենտրոններ:
3. Ինչո՞ւ է ացետոն-ջուր խառնուրդը համարվում համասեռ:
4. Թորման արդյունքում առաջացած յուրահատուկ հոտը ո՞ր նյութով է պայմանավորված:
5. Թորումը ֆիզիկական, թե քիմիական երևույթ է:

